ԱՇՈՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ծննդյան թիվը և վայրը՝
1961թ. նոյեմբերի 16, ք. Երևան:

Կրթությունը՝
1983թ. ավարտել է Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ սլավոնական լեզուներ մասնագիտությամբ
1987թ. ավարտել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի սլավոնագիտության և բալկանագիտության ինստիտուտի ասպիրանտուրան (Մոսկվա)՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական կոչում

Աշխատանքային գործունեությունը՝
1988-1992թթ. - ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գրականության ինստիտուտի գիտաշխատող
1992-1993թթ. - ՀՀ ԱԳՆ Եվրոպայի բաժնի երկրորդ քարտուղար
1993-1996թթ. - Հունաստանի Հանրապետությունում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, այնուհետև՝ դեսպանության առաջին քարտուղար
1996-1998թթ. - ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության Երկրորդ եվրոպական բաժնի վարիչ, ապա՝ Երկրորդ եվրոպական բաժանմունքի տնօրեն
1998թ. - ՀՀ ԱԳ նախարարի խորհրդական
1998թ. – համատեղության կարգով, իսկ նոյեմբերից՝ մշտական հիմունքներով Լեհաստանի Հանրապետությունում ՀՀ գործերի հավատարմատար
1999-2006 թթ. – Լեհաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
2000-2006 թթ.– համատեղության կարգով Լատվիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վարշավա)
2000- 2006 թթ. – համատեղության կարգով Լիտվայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վարշավա)
2000-2006թթ. – համատեղության կարգով Էստոնիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վարշավա)
2006-2011թթ. - Ավստրիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
2006-2011թթ. – համատեղության կարգով Հունգարիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վիեննա)
2006-2011թթ. - համատեղության կարգով Չեխիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վիեննա)
2006-2011թթ. – համատեղության կարգով Սլովակիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վիեննա)
2008-2011թթ. - ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ
2008-2011թթ. – Վիեննայում տեղակայված ՄԱԿ-ում և միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչ

2011-2018թթ. ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ:

Դիվանագիտական աստիճանը՝
Արտակարգ և լիազոր դեսպան

Պարգևները՝
2005թ. - Լեհաստանի Պատվո շքանշանի Կոմանդորական խաչ
2006թ. - Էստոնիայի Տեռռա Մարիանայի Խաչի երկրորդ դասի շքանշան
2011թ. - Մխիթար Գոշ մեդալ՝ դիվանագիտության ասպարեզում ունեցած նշանակալի ծառայությունների համար
2016թ. - «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ

Օտար լեզուների իմացությունը՝
ռուսերեն, անգլերեն, սերբերեն, խորվաթերեն, լեհերեն

Գիտական գործունեությունը՝
2 գիտական մենագրությունների և շուրջ 60 գիտական և քաղաքագիտական հոդվածների հեղինակ է

Ընտանեկան կարգավիճակը՝
Ամուսնացած է, ունի դուստր և որդի:
ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի 2018թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով նշանակվել է Չեխիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Պրահա):